Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն Հ.Կարապետյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արագածոտնի մարզի Դավթաշենի Ա. Վարդանյանի անվան
միջնակարգ դպրոցի
X| դասարան

Դասղեկ Սոնյա Կիրակոսյան

2022-2023 ուս. տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է երկու հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: *Չկա* գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում աշակերտները ընկերությունենանում անշահախնդիր:Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Աշակերտները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն*) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

ուսումնական շաբաթներ	*ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն*	*կատարման ժամկետը*	*կատարողներ*
1-ին շաբաթ	Գիտելիքի օր:Կազմակերպչական աշխատանքներ	01.09	աշակերտներ դասղեկ
2-րդ շաբաթ	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում:	05.09- 09.09	աշակերտներ դասղեկ
3-րդ շաբաթ	Աշակերտի իրավունքները և պարտականությունները	12.09- 17.09	աշակերտներ դասղեկ
4-րդ շաբաթ	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	19.09- 23.09	աշակերտներ դասղեկ
5-րդ շաբաթ	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:	26.09- 30.09	աշակերտներ դասղեկ
6-րդ շաբաթ	Ուսուցչի տոն: Ուսուցչի դերն սերունդների դաստիարակման գործում	03.10- 07.10	աշակերտներ դասղեկ
7-րդ շաբաթ	Հոգու կրթություն և մտքի թռիչք:	10.10- 14.10	աշակերտներ դասղեկ
8-րդ շաբաթ	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նպատակն է վերհանել կարողությունները և հմտությունները	17.10- 21.10	աշակերտներ դասղեկ
9-րդ շաբաթ	<<Գնահատիր ինքդ քեզ>>նպատակն է արժևորել արժեհամակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն	31.10- 04.11	աշակերտներ դասղեկ
10-րդ շաբաթ	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես>>թեմայով զրույց:Զնավորել բազմակարծություն և աշխարհայացք	07.11- 11.11	աշակերտներ դասղեկ
11-րդ շաբաթ	<Կարողությունների հստակեցում > թերթիկի միջոցով հստակեցնել նրանց կարողությունները	14.11- 18.11	աշակերտներ դասղեկ
12-րդ շաբաթ	<Ես էլ քեզ նման եմ>թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	21.11- 25.11	աշակերտներ դասղեկ
13-րդ շաբաթ	Ճակատագիր, թե սեփական բախտի տնօրինում	28.11- 02.12	աշակերտներ դասղեկ
14-դշաբաթ	Երկրաշարժ...Հայ ժողովրդի պատուհասած աղետը	05.12- 09.12	աշակերտներ դասղեկ
15-դշաբաթ	Հայ ընտանիքի կերպարը	12.12- 16.12	աշակերտներ դասղեկ
16-դշաբաթ	Առաջին կիսամյակի ուս. տարվա ամփոփում: Ամանորյա ջերմ մաղթանքներ	19.12- 23.12	աշակերտներ դասղեկ
17-րդ շաբաթ	Երկրորդ կիսամյակի անելիքները	09.01- 13.01	դասղեկ
18-րդ շաբաթ	Ծնողական ժողով	16.01- 20.01	դասղեկ ուսուցիչներ
19-րդ շաբաթ	Հայկական բանակի տոնը	23.01- 27.01	զինղեկ
20-րդ շաբաթ	Ինչ տոն է,,Սուրբ Սարգիսի..տոնը	30.01- 03.02	դասղեկ
21-րդ շաբաթ	Ով է հոգեպես հարուստ	06.02- 10.02	կազմակերպիչ դասղեկ

22-րդ շաբաթ	Յուրաքանչյուրն բնութագրի իր մտերիմ ընկերոջը	13.02- 17.02	աշակերտն դասղեկ
23-րդ շաբաթ	Երբ մեղավոր ես,ներողությունը բարձրայնիր	20.02- 24.02	աշակերտնե դասղեկ
24-րդ շաբաթ	Գարունը գեղեցիկ է	27.02- 03.03	աշակերտնե
25-րդ շաբաթ	«Մայր իմ քնքուշ ու բարի» յուրաքանչյուրն բնութագրի իր մայրիկին յուրօրինակ	06.03- 10.03	դասղեկ աշակերտնե
26-րդ շաբաթ	Զրույց «Ինչպե՞ս պահպանել առողջությունը» երբ փոխվում են տարվա եղանակները	13.03-17.03	դասղեկ
27-րդ շաբաթ	Ընթացիկ գնահատականների ստուգում և հարցերի քննարկում	20.03- 25.03	դասղեկ աշակերտնե
28-րդ շաբաթ	Անցկացնել դասալսումներ և քննարկել աշակերտների հետ	03.04- 07.04	դասղեկ
29-րդ շաբաթ	Ով է հոգեպես հարուստ	10..04- 14.04	դասղեկ աշակերտնե
30-րդ շաբաթ	Աստիճաններով վեր բարձրանալիս,հիշիր,որ պետք է իջնես	17.04- 21.04	դասղեկ աշակերտնե
31-րդ շաբաթ	< Հայոց Մեծ եղեռն > աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը	24.04- 28.04	դասղեկ աշակերտնե
32-րդ շաբաթ	Մայիսյան հաղթանակներ	02.05- 05.05	դասարան
33-րդ շաբաթ	Մայիսի 9-ը հաղթանակների օր է	08.05- 12.05	զինղեկ
34-րդ շաբաթ	Տարվա ամփոփում, վերջին զանգ	15.05- 26.05	դասղեկ